ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- փետրվարի 2023 թվականի №--- -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի №35Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իր 2020 թվականի փետրվարի 19-ի №35Ա որոշմամբ համաձայնություն է տվել «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող գույքի՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությունում, այդ թվում՝ որպես «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» փի-էլ-սի ընկերության ապահովման և պարտքերի հավաքագրման գործակալ, և (կամ) Եվրասիական զարգացման բանկում գրավադրման գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը՝ սահմանելով Գործարքի կնքման վեցամսյա ժամկետ,

բ) Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №278Ա, 2021 թվականի փետրվարի 10-ի №36Ա, հուլիսի 28-ի №273Ա, 2022 թվականի փետրվարի 16-ի №62-Ա և օգոստոսի 10-ի №320-Ա որոշումներով, Ընկերության դիմումի հիման վրա, Գործարքի կնքման ժամկետն ընդհանուր առմամբ երկարաձգվել է երեսուն ամսով,

գ) Ընկերությունը 2023 թվականի հունվարի 24-ի №535-2023 գրությամբ դիմել է Հանձնաժողով և խնդրել ևս վեց ամսով երկարաձգել Գործարքի կնքման ժամկետը՝ հայտնելով, որ գրավադրման ենթակա գույքի չափագրման աշխատանքների իրականացման ընթացքում ծագած խնդիրների լուծման հետևանքով իրականացվող աշխատանքների պատճառով դեռևս հնարավոր չէ ավարտել դրանք, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 19-ի «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 90 տոկոսը կազմող բաժնետոմսերի և գույքի գրավադրմանը համաձայնություն տալու մասին» №35Ա որոշման 2-րդ կետում «երեսունվեց» բառը փոխարինել «քառասուներկու» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--- փետրվարի 2023թ.